# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 20.12.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/14 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան

<<05>> հունիսի 2023թ.

**<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ**-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և **<<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ**, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 20.12.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/14 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 20.12.2022թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

### 2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ | <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ |
| ք. Երևան, Արմենակյան 108/4 | ք. Երևան, Արզումանյան 32-10 |
| ՀՎՀՀ 01508793 | ՀՎՀՀ 01210095 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ | h/h 217002182558001 |
| Հ/Հ 1150001612200100 | <<Էյչ Էս Բի Սի>> Բանկ Հայաստան ՓԲԸ |
| Մ. Ադամյան | lawyer@c-e.am |
| | Բ. Թադևոսյան |
| ---------------------------- (ստորագրություն) | ---------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |